☎ +37433763444
info@tontechnics.am
www.tontechnics.am

ՀՀ, Գյումրի, 13 փ. 6-17
ՀՎՀՀ 05555872
ՀՀ 2470081908260000
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՎԻԱՑԻՈՆ ՆԵՐԿՄԱՆ ԱՆԳԱՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ «Տոն-Թեքնիքս» ՍՊԸ-ը, որը գտնվում է քաղաք Գյումրի, 13 փ. 6-17 հասցեում, հայտարարում է Airbus A320, Boeing 737 ընտանիքների և բիզնես ջեթերի դասի համար նախատեսված ներկման անգարի նախագծի հարցման ընթացակարգ, որն իրականացվում է մեկ փուլով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի նախագծային աշխատանքների կատարման պայմանագիր:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք ունի ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքի:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ հասցեով՝ tender@tontechnics.am: Հայտերը ընդունվում են հուլիսի 18-ից մինչև հուլիսի 31-ը ներառյալ:

Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա առցանց տարբերակով, ս.թ. օգոստոսի 4-ին, ժամը 12:00-ին: Մրցույթի արդյունքները կհրապարակվեն Պատվիրատուի պաշտոնական կայք էջում՝ «Tenders» բաժնում՝ www.tontechnics.am:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար Արման Մալոյանին:

Հեռախոս՝ 077 93 02 57
Էլ. փոստ՝ a.maloian@tontechnics.am

Մրցույթային հայտը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, մրցույթի մասնակցին կուղարկվի տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա պետք է ներկայացվի գնային առաջարկը:
Մրցույթի մասնակիցը պարտավոր է ներկայացնել հետևյալ տեղեկատվությունը.

1. Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր,
2. Գնային առաջարկ,
3. Նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների փորձ, ոչ պակաս քան 3 տարվա,
4. Ընկերության վավերապայմաններ,
5. Նախկինում իրականացված նախագծային աշխատանքների ցանկը՝ պորտֆոլիո,
6. Բանկային ռեկվիզիտներ,
7. Նախորդ օրացուցային տարվա ֆինանսական հաշվետվությունները:

Ընթացքում «Տոն-Տեքնիքս» ՍՊԸ կարող է մասնակիցներից հավելյալ տեղեկություն հայցել:
Մրցույթի մասնակիցները սույնով տալիս են իրենց համաձայնությունը երրորդ կողմից չփոխանցել սույն մրցույթի շրջանակներում իրենք փոխանցված տեղեկատվությունը: